# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 24 | Հունիս | 2019 թ. | Բ | 1977822816 |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
| 24 | Հունիս | 2019 թ. | Սերիա | Համար |
| | | | | |
| | | | Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 24 Հունիս, 2019 թ. | **Բ1977822816** |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 1 2 4 1 0 5 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ՖԻՆԼՈՌ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ — N 2474602078940000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011002160 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ քանակը համապատասխան չափով | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից պարսկերեն քր. գործ թիվ 45101916 | նիշ | 63838 | 1.94 | | 123845.72 |
| 2 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայ.-ռուս.-հայ.քր. գործ թիվ 27113516 | ժամ | 46 | 5000 | | 230000 |
| 3 | իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն քր. գործ թիվ 27113516 | էջ | 44 | 2500 | | 110000 |
| 4 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայ.-ռուս.-հայ.քր. գործ թիվ 15149916 | ժամ | 7.5 | 5000 | | 37500 |
| Ընդամենը | | | | | | 501345.72 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ SHAHINYAN VARDUHI 7803710425

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

24/06/2019 18:35:39

# Ո Ր Ո Շ Ու Մ

## Քրեական գործով թարգմանիչ նշանակելու մասին

21.08.2016թ.

ք. Կապան

ՀՀ քննչական կոմտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Նարեկ Աբգարյանս, վերանայելով վարույթիս թիվ 45101916 քրեական գործի նյութերը.

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2016թ. օգոստոսի 18-ին՝ ժամը 16:20-ին, ԻԻՀ քաղաքացի Սայիդ Մահմուդի Ամուզեգարանը առանց իրացնելու նպատակի զգալի չափերով Մարիխուանա տեսակի թմրամիջոց պահելու, փոխադրելու և մաքսանենգություն կատարելու դիտավորությամբ տեղափոխման համար սահմանված կանոնները, այդ թվում՝ արգելքներն ու սահմանափակումները խախտելու միջոցով, իր սեփական <<TOYOTA LEXUS RX 350>> մակնիշի 95D197-10 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում տեղավորելու եղանակով պահել, փոխադրել և ՌԴ թիվ 2393 զորամասի <<Ագարակ>> հսկիչ-անցագրային կետով ՀՀ պետական սահմանով ապօրինի տեղափոխել է Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում անհայտ անձից ապօրինի ձեռք բերված զգալի չափերով՝ 1,27 գրամ հաստատուն քաշով <<Մարիխուանա>> տեսակի թմրամիջոց:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որոշակի փաստաթղթեր հայրեն լեզվից թարգմանել պարսկերեն լեզվով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 45101916 քրեական գործով հայրեն լեզվից պարսկերեն լեզվով փաստաթղթերի թարգմանություններ կատարելու նպատակով թարգմանիչ նշանակել «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի աշխատակից՝ **թարգմանիչ Ռոբերտ Լևոնի Թահմասյանին /ծնված 09.12.1969թ., ՀՀ ք. Երևան Ազատության 8, բնակարան 23, ՀՀ ԱՆ նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչի վկայական № 101, տրված՝ 30.06.2004թ./:**
2. Թարգմանչին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները ու պարտականությունները և միաժամանակ նրան նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ [signature] Ն. Աբգարյան

---

Թարգմանիչ՝ [signature] Ռ. Թահմասյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 45101916 քրեական գործով

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ն. Աբգարյանս, վարույթումս քննված թիվ 45101916 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ թարգմանիչ Ռոբերտ Լևոնի Թահմասյանը, ով հանդիսանում է «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի աշխատակից, թիվ 45101916 քրեական գործով որպես թարգմանիչ է ներգրավվել 21.08.2016 թվականին և կատարել գրավոր թարգմանություն հայերենից պարսկերեն՝ /63838 նիշ/:

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ Ն. ԱԲԳԱՐՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«15» օգոստոսի 2016թ.

ք. Արտաշատ

Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Սուլթանյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 27113516 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2016թ. հուլիսի 10-ին ժամը 20:30-ի սահմաններում Արարատի մարզի Դվին գյուղի բնակիչ Կամո Մինասի Մինասյանը և Վերին Դվին գյուղի բնակիչ Ջոնիկ Իգորի Աբդալովը, նախնական համաձայնությամբ գողություն կատարելու դիտավորությամբ խմբի կազմում Ջոնիկ Աբդալովի փաստացի տնօրինության տակ գտնվող Վազ 2107 մակնիշի առանց հաշվառման համարանիշի ավտոմեքենայով գնացել են Այգեստան գյուղում գտնվող նույն գյուղի բնակիչ Գագիկ Թամրազյանին պատկանող սեփականաշնորհված տարածք, որտեղ ծառերից քաղելու միջոցով գաղտնի հափշտակել են զգալի չափերով՝ 7000 ՀՀ դրամ արժողությամբ մոտ 20 կգ խնձոր:

Դրանից հետո 2016թ. հուլիսի 11-ին ժամը 20:30-ի սահմաններում Կամո Մինասյանը և Ջոնիկ Աբդալովը նույն տեղից դարձյալ զգալի չափերով խնձոր հափշտակելու հարցի շուրջ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում Ջոնիկ Աբդալովի փաստացի տնօրինության տակ գտնվող Վազ 2107 մակնիշի առանց հաշվառման համարանիշի ավտոմեքենայով գնացել են Գագիկ Թամրազյանին պատկանող սեփականաշնորհված տարածք, որտեղ ծառերից քաղելու միջոցով 4 արկղերի մեջ են լցրել զգալի չափերով՝ ընդհանուրը 56.000 ՀՀ դրամ արժողությամբ 80կգ խնձոր, սակայն հանցագործությունը իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել հասցնել ավարտին, այն է՝ նույն պահին այնտեղ է գնացել Գագիկ Թամրազյանը, որին տեսնելով Կամո Մինասյանը և Ջոնիկ Աբդալովը խնձորները և ավտոմեքենան թողնելով նշված տարածքում դիմել են փախուստի:

Դեպքի առթիվ Արարատի մարզային քննչական վարչությունում 22.06.2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 27113516 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ քրեական գործով կասկածյալ Ջոնիկ Աբդալովը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ ՀՀ քր. դատ. օր.-ի 15-րդ հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

Վարույթումս գտնվող թիվ 27113516 քրեական գործով թարգմանություն կատարելու համար որպես թարգմանիչ ճանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Սուրենի Խանիկյանին /ծնված՝ 04.10.1973թ, բնակվում է ք. Երևան, Նորաշեն 16 թաղամաս, 14/29 բնակարանում/ նրան բացատրել ՀՀ քր. դատ. օր. -ի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները,

միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քր. օր.-ի 338 և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ                                        Ա.Սուլթանյան

Որոշումն ինձ հայտնվել է, պարզաբանվել իմ իրավունքներն ու պարտականությունները                                        Ա. Խանիկյան

«15» օգոստոսի 2016թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ
## /թիվ 27113516 քրեական գործով/

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ա.Սուլթանյանս, վարույթումս քննվող թիվ 27113516 քրեական գործով 15.08.2016 թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Սուրենի Խանիկյանին, ով սույն քրեական գործի շրջանակներում կատարել է թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը՝ 46 ժամ տևողությամբ, ինչպես նաև գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն՝ 44 էջ :

Արարատի մարզային քննչական
վարչության ավագ քննիչ՝ Ա. Սուլթանյան

## Ո Ր Ո Շ Ու Մ
### թարգմանչի ներգրավելու մասին

«29» 08 2016թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Ռ.Կիրակոսյանս վերանայելով վարույթումս քննվող թիվ 15149916 քրեական գործի նյութերը.

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Անհայտ անձը, ունենալով ուրիշի գույքի զգալի չափերի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորություն, 2016թ. օգոստոսի 26-ին՝ ժամը 20:00-ից մինչև 2016թ. օգոստոսի 29-ը՝ ժամը 18:00-ն ընկած ժամանակահատվածում, տեխնիկական միջոցի գործադրմամբ պատուհանի ճաղավանդակը հանելու, այնուհետև նաև պատուհանի ապակին կոտրելու միջոցով ապօրինի մուտք է գործել պահեստարան հանդիսացող Երևան քաղաքի Նորքի 9-րդ փողոցի 83/3 առանձնատան խորդանոց, որտեղից գաղտնի հափշտակել է Յ.Հովհաննիսյանին պատկանող զգալի չափերի «Բոշ» տեսակի էլեկտրական սղոցը և ռուսական արտադրության էլեկտրական խոտհնձիչը և դիմել փախուստի:

Դեպքի առթիվ 10.08.2016թ. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 15149916 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Պարզվել է, որ Յուրի Հովհաննիսյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ Յուրի Յուրայի Հովհաննիսյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Որպես թարգման հրավիրել «Ֆինանս ՍՕՍ» ՍՊԸ-ի [illegible] թարգմանիչ Գայանե [illegible] Երեմայանին-ին, որն ազատորեն տիրապետում է ռուսերեն և հայերեն գրավոր ու բանավոր լեզվին, կարող է կատարել թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը, գործով չշահագրգռված անձ է:
2. Թարգման Գ. Երեմայանին-ին պարզաբանել իր պարտականությունները և իրավունքները ու նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրանց հայտնել ստորագրությամբ:

Ավագ քննիչ Դ.Ռ.Կիրակոսյան

# ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Ռ.Կիրակոսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս քննված թիվ 15149916 քրեական գործով «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի թարգմանիչ Գագիկ Շիրմազանյանը, ով 2016 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ ներգրավվել է որպես թարգմանիչ և սույն քրեական գործով կատարել է 7 ժամ 30 րոպե ընդհանուր տևողությամբ ռուսերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

**Կենտրոն և Նոր Մարաշ վարչական շրջանի**
**քննչական բաժնի ավագ քննիչ՝** **Դ. Կիրակոսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«04» 04 2019 թ.

N 7-684-18

## ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Բ. Ադամյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթում քննված թիվ **61203118** քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Վահագն Ղազարյանը կատարել է հայերենից պարսկերեն բանավոր թարգմանություն՝ ընդհանուր 42 ժամ տևողությամբ:

**Ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ՝** **Բ. Ադամյան**